Այբ դպրոց

«ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԵԼՈՎ»

փորձնակության տոնավաճառ

Ayb Internship Fair 2022

ծրագրի համառոտ նկարագիր

Օր՝ Հուլիսի 1, 2022
Վայր՝ «Այբ» դպրոց
Ժամ՝ 10:00-15:00

ԻՆՉ Է ԼԻՆՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐԸ

Միջոցառման օրը բաղկացած է երկու հիմնական մասից:

Ա. Ընկերությունների և շրջանավարտների սեմինարներ

- Մասնագետների, շրջանավարտների և ընկերությունների կողմից անցկացվող սեմինարներ, **տևողությունը՝ 30 րոպե**
- Սեմինար վարելը պարտադիր չէ, բայց ցանկալի է: Թեման ազատ է, կարող է լինել մասնակիցների գործունեության և հաջողության պատմության ծանոթացում կամ այլ թեմա, որը կօգնի աշակերտներին կողմնորոշվելու մասնագիտության հարցում և ոլորտի մասին ավելի լայն պատկերացում կազմելու:
- Դասընթացին մասնակցությունը գրանցումով է:

Բ. Տոնավաճառ, աշակերտների հետ ազատ շփում և դիմումների ընդունում

- Գրանցված կազմակերպությունների մասնակցությունը տոնավաճառին պարտադիր է:
- Ընկերությանը հատկացվում է առանձին տարածք, որտեղ կարող են լինել ընկերության ցուցանակները, պաստառները, տաղավար և այլն:
- Ընթացքում աշակերտներն ու շրջանավարտները շրջում և իրենց նախընտրած ընկերությունների հետ հաղորդակցվում են, փոխանցում իրենց դիմումները, ինքնակենսագրությունները:
- Հավաքված դիմումների հիման վրա ընկերությունը հետագայում ընտրում է իր փորձնակներին:

ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԼԻՆԻ ՓՈՔՐԻԿ ԹԵՅԱԽՄՈՒԹՅՈՒՆ:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

- «Այբ» ավագ դպրոցի ներկայիս աշակերտներ (10-12-րդ դասարաններ)
- Շրջանավարտներ
- «Այբ հիբրիդային կրթություն» ծրագրի մասնակիցներ

ԻՆՉՊԵՍ Է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ՓՈՐՁՆԱԿՆԵՐԻՆ

1. Ընդունում է դիմումներն ու ինքնակենսագրությունները:
2. Անցկացնում է հարցազրույց (ըստ անհրաժեշտության):

Փորձնակության հատկացվող տեղերի քանակը որոշում է ընկերությունը:

ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

• 2 շաբաթից մինչև 2 ամիս

Փորձնակության շաբաթական օրերը և օրական աշխատանքային ժամերը համաձայնեցվում են փորձնակի և ընկերության միջև (շրջանավարտների հետ համագործակցության դեպքում ժամանակային պայմանները կարող են փոխվել):
Ուշադրություն: Եթե փորձնակն անչափահաս է, փորձնակության պայմանագիրը կնքվում է փորձնակի ծնողի կամ խնամակալի հետ:

ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՆԻ ԱՎԱՐՏ

Փորձնակության ավարտին ընկերությունը տրամադրում է տեղեկանք, պատվոգիր կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է տվյալ ընկերությունում աշակերտի/շրջանավարտի փորձնակությունը:

ՄԵՐ ՓՈՐՁՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- շահադրդված են
- տիրապետում են ժամանակակից տեխնոլոգիաներին
- ճկուն են
- ձեր ընկերությանը կհաղորդեն նոր շունչ ու նոր հայացք
- ստեղծարար են
- գիտեն միաժամանակ մի քանի օտար լեզու
- ունեն հետագայում վստահելի մասնագետ դառնալու ներուժ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Խնդրում ենք ծրագրին մասնակցելու համար ներկայացնել ձեր ընկերությունում հնարավոր փորձնակության մանրամասներն *այստեղ:*

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձանց հետ՝
Լիլիթ Բաղդասարյան/ Lilit_Baghdasaryan@aybschool.am/ +374 98 97 90 26,
Ռուզաննա Մայիլյան/ Ruzanna_Mayilyan@aybschool.am/ +374 93 99 07 11: